

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵՆԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵՆԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի համակարգն իր մեջ ներառում է լայն շրջանակի հասարակական հարաբերություններ և ոլորտներ, որոնք ենթակա են կարգավորման ՓԼ/ԱՖ-ը կանխարգելելու, օրենսդրական պահանջները խախտելու դեպքում պատասխանատվության տարբեր միջոցներ կիրառելու, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, իրավապահ մարմիններին ՓԼ/ԱՖ գործերի քննության համար անհրաժեշտ իրավասություններով օժտելու, և արդյունքում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետության առավել բարձր մակարդակ երաշխավորելու նպատակով:

Դեռևս 2014 թվականի հունիսի 21-ին ՀՀ ազգային ժողովի կողմից 15 օրենքների նախագծերից բաղկացած օրենսդրական փաթեթի ընդունմամբ առավել ամուր հիմքերի վրա դրվեց ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը: Այդ մասին է վկայում Եվրոպայի Խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից 2014թ. դեկտեմբերի 10-ին ընդունված ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը¹ (այսուհետ՝ Գնահատման հաշվետվություն):

Զնայած Գնահատման հաշվետվությամբ արձանագրված էական բարելավումներին դրանց հետ մեկտեղ վեր են հանվել որոշակի խնդիրներ և դրանց վերացման մասով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Առաջնահերթ համարվող և օրենսդրական լուծում պահանջող հանձնարարականների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից Միավորված ազգերի կազմակերպությանն անդամակցության շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մշակվել են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերում առկա են նաև փոփոխություններ՝ կապված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա թերությունների վերացման և դրանցում հստակեցումներ իրականացնելու անհրաժեշտությամբ:

Հարկ է նշել, որ սույն թվականի դեկտեմբեր ամսին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին ներկայացվել է միջանկյալ հաշվետվություն՝ Նախագծերով նախատեսված փոփոխությունների մասով: Հանձնաժողովի կողմից բարձր է գնահատվել Նախագծերի մշակման նախաձեռնությունը և կոչ է արվել հնարավորինս շուտ ընդունել դրանք:

Ինչ վերաբերում է Միավորված ազգերի կազմակերպությանն անդամակցության շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարմանը, անհրաժեշտություն է առաջացել ՄԱԿ անվտանգության խորհրդի՝ զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՋՈԶ) տարածման դեմ պայքարին վերաբերող 2004թ. թիվ 1540 բանաձևերով նախատեսված պահանջն իմպլեմենտացնել ՀՀ օրենսդրությամբ:

2. Կարգավորման նպատակը և բնույթը

¹ Գնահատումը կատարվել է ՖԱԹՖ-ի 2012թ. վերանայված մեթոդաբանության համաձայն, ըստ որի՝ երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը գնահատվում է ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականներին տեխնիկական համապատասխանության, ինչպես նաև մեթոդաբանությամբ սահմանված 11 անմիջական արդյունքների իրագործման արդյունավետության տեսանկյունից:

Նախագծերում ներառված փոփոխություններն ու լրացումներն ունեն հետևյալ հիմնական նպատակները՝

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանել ՁՈՋ տարածման հետ կապված անձանց պատկանող գույքի սառեցման պարտականություն

2012թ. վերանայման արդյունքում ՖԱԹՖ հանձնարարականների կարգավորման շրջանակն ընդլայնվեց՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարից բացի ներառելով նաև ՁՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարը՝ որպես ահաբեկչական գործողություններին օժանդակող միջոցների² մեկը: Այս խնդրին անդրադարձ է կատարվում ՖԱԹՖ 7-րդ հանձնարարականում, որով պարտավորություն է սահմանվում երկրների համար անհապաղ կատարելու ՄԱԿ ԱԽ և դրանց հաջորդող բանաձևերով ՁՈՋ տարածման դեմ սահմանված թիրախային ֆինանսական պատժամիջոցները: Դրանցով երկրներից պահանջվում է անհապաղ սառեցնել բոլոր այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք պատկանում են ցանկացած անձի կամ կազմակերպության, ինչպես նաև արգելել միջոցների կամ այլ ակտիվների հասանելիությունը կամ տրամադրվելը հոգուտ ցանկացած անձի կամ կազմակերպության, ով ցուցակվել է ՄԱԿ ԱԽ կողմից՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումը կանխարգելելու և խափանելու վերաբերյալ Անվտանգության խորհրդի բանաձևերի համաձայն:

Հարկ է նշել, որ Գնահատման հաշվետվությամբ որպես թերություն արձանագրվել է ՁՈՋ տարածման ֆինանսավորման դեպքում կիրառվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենսդրությամբ նախատեսված չլինելը: Ուստի, այս խնդիրն իր կարգավորումն է գտել ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում. ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցման պարտականության հետ մեկտեղ նախատեսվել են նաև ՁՈՋ տարածման հետ կապված անձանց գույքի սառեցման պարտականություն և դրա կատարումն ապահովող դրույթներ:

Բացի այդ, նախագծում տեղ է գտել դրույթ, որն արգելում է անձանց ուղղակի կամ անուղղակի կերպով, ամբողջությամբ կամ համատեղ կարգով գույք, տնտեսական ռեսուրսներ կամ ֆինանսական կամ այլ հարակից ծառայություններ հասանելի դարձնելը ահաբեկչության և ՁՈՋ տարածման հետ կապված անձանց կամ ի շահ նրանց: Այս պահանջը բխում է նաև ահաբեկչության և ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցների վերաբերյալ ՖԱԹՖ 6-րդ հանձնարարականից:

2. Անշարժ գույքի առուվաճառքի գործարքների մասով նախատեսել համապատասխան շեմից բարձր կանխիկ եղանակով իրականացվող վճարումների սահմանափակում

««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվել է Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի՝ 50 միլիոն դրամը գերազանցող առուվաճառքի գործարքների դեպքում արգելել գերազանցող գումարի մասով կանխիկ եղանակով վճարում իրականացնելը, եթե 50 միլիոն դրամից փոքր գումարային սահմանաչափ սահմանված չէ օրենքով:

Նշված սահմանափակման հետ կապված՝ լրացում է կատարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ քաղաքացիների մասնակցությամբ ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված կանխիկ հաշվարկների հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթում:

Կանխիկի շրջանառության սահմանափակման նախատեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Գնահատման հաշվետվությամբ արդյունավետության գնահատման մասով, ի թիվս այլ խնդիրների, մտահոգիչ են համարվել նաև անշարժ գույքի ոլորտում կանխիկի լայնածավալ օգտագործումը, ռիելտորական գործունեության նկատմամբ վերահսկողության բացակայությունը, որի վերաբերյալ Անմիջական արդյունք 4-ի (կանխարգելիչ միջոցառումներ) շրջանակներում տրվել է հանձնարարական: Վերջինիս համաձայն՝ Հայաստանը պետք է որոշակի միջոցառումներ ձեռնարկի առևտրային գործարքներում, մասնավորապես՝ անշարժ գույքի ոլորտում կանխիկի օգտագործումը նվազեցնելու

² Տե՛ս

ուղղությամբ՝ սահմանելով այդ գործարքներում կանխիկի օգտագործման վերին շեմ (ռիսկի վերլուծության հիման վրա) և ներդնելով այդ պահանջի կիրարկման մեխանիզմ:

Անշարժ գույքի առուվաճառքի գործարքների դեպքում կանխիկ եղանակով վճարում իրականացնելու սահմանափակման համար 50 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափի նախատեսման հիմքում ընկած են նոտարների և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2015-2016թթ. անշարժ գույքի գործարքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների տվյալների հիման վրա իրականացված վերլուծության արդյունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն իսկ «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքով իրավաբանական անձանց համար առկա է սահմանափակում կանխիկ եղանակով գործարքների իրականացման համար՝ ստորև ներկայացվում է ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի գործարքները կանխիկ եղանակով իրականացնելու համար սահմանափակում նախատեսելու հետ կապված գումարային և քանակական վերլուծությունը: Այսպես.

Դիտարկվող ժամանակահատվածում ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի շուկայում կանխիկ եղանակով կատարված և 50 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գործարքների ընդհանուր գումարը կազմում է անշարժ գույքի շուկայի առուվաճառքի գործարքների ընդհանուր գումարի շուրջ 12 տոկոսը: Սակայն, հաշվի առնելով այն, որ օրենքի նախագծի համաձայն՝ անշարժ գույքի առուվաճառքի գործարք իրականացնելիս մինչև 50 միլիոն ՀՀ դրամի չափով գումարը կարող է վճարվել կանխիկ եղանակով, անկանխիկ վճարման պահանջը կտարածվի միայն 50 միլիոն ՀՀ դրամը գերազանցող մասի վրա, որը կազմում է անշարժ գույքի շուկայի առուվաճառքի գործարքների ընդհանուր գումարի շուրջ 5,7 տոկոսը:

Ինչ վերաբերում է անշարժ գույքի շուկայում կնքված առուվաճառքի գործարքների քանակական վերլուծությանը, ապա ընդհանուր քանակի մեջ 50 միլիոն ՀՀ դրամից ավել արժեքով գործարքների քանակը կազմել է միջինում 2.4 տոկոս, իսկ կանխիկ եղանակով 50 միլիոն ՀՀ դրամից ավել արժեքով իրականացված գործարքների քանակը՝ միջինում 1.9 տոկոս: Այս տեսանկյունից, օրենսդրական փաթեթով նախատեսված սահմանափակումները տարածվելու են անշարժ գույքի շուկայում կնքվող առուվաճառքի գործարքների աննշան մասի վրա:

Սա, իր հերթին, շուկայի հիմնական մասնակիցների վարքագծի հարկադրված փոփոխության չի հանգեցնի, սակայն փողերի լվացման ռիսկերի զսպման տեսանկյունից կարևոր ազդակ կտա հանրությանը: Ավելին, ՀՀ-ում ֆինանսական ներառման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆինանսական ծառայություններից դուրս մղված հիմնական հատվածներն են, օրինակ, գյուղական բնակչությունը, բնակչության ցածր եկամուտ ունեցող խմբերը և այլն: Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ 50 միլիոն ՀՀ դրամ և ավել արժողությամբ անշարժ գույքի առուվաճառքի գործարքների շուրջ 80 տոկոսը կնքվում է Երևան քաղաքում, և գործարքի կողմերը ներառված չեն վերոնշյալ խմբերի մեջ, ավելին՝ ունեն հարաբերական բարձր եկամուտներ: Հետևաբար, բնակչության բարձր եկամուտ ունեցող խմբի քաղաքացիների համար բանկային ծառայություններից օգտվելն իրենց բնականոն/ իրավաչափ գործունեության որևէ խոչընդոտ չի ստեղծում, իսկ գործարքը կանխիկ եղանակով իրականացնելու և անկանխիկ (բանկային) վճարումից խուսափելու դրդապատճառների հիմքում մեծ հավանականությամբ կարող է ընկած լինել գործարքի առարկա միջոցների ծագման աղբյուրը թաքցնելու կամ գործարքի հետ կապված այլ ֆինանսական տեղեկատվությունը թաքցնելու ցանկությունը:

Ինչ վերաբերում է ոչ ռեզիդենտ անձանց (ՀՀ քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձինք և ՀՀ տարածքից դուրս գրանցված իրավաբանական անձինք) կողմից ՀՀ անշարժ գույքի շուկայում իրականացվող ներդրումներին, ապա այս տեսանկյունից իրականացվել է միայն քանակական վերլուծություն, որի արդյունքների համաձայն՝ կանխիկ եղանակով 50 միլիոն ՀՀ դրամից ավել արժեքով առուվաճառքի բոլոր գործարքների քանակի մեջ ոչ ռեզիդենտ անձանց կողմից կատարված գործարքները կազմում են միջինում 10 տոկոս: Այսպիսով, ՀՀ անշարժ գույքի շուկայում 50 միլիոն ՀՀ դրամից ավել արժեքով կանխիկ եղանակով անշարժ գույքի առուվաճառքի գործարքների գերակշիռ մասը կատարվում է ՀՀ ռեզիդենտների կողմից:

Հարկ է նշել, որ անշարժ գույքի առուվաճառքի գործարքների դեպքում և ընդհանրապես կանխիկ եղանակով վճարումների սահմանափակում նախատեսված է նաև մի շարք օտարերկրյա պետություններում: Այսպես.

- Մեքսիկայում անշարժ գույքի հետ կապված գործարքներում արգելվում են 500.000 պետոյից (մոտավոր 10.500\$) ավել կանխիկ վճարումները:

- Բելգիայի «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակով ֆինանսական համակարգի օգտագործումը կանխարգելելու մասին» օրենքի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի դեպքում գումարը կարող է վճարվել միայն բանկային փոխանցմամբ կամ չեկով:

- Ուկրաինայի Ազգային բանկի 2013թ. «Կանխիկ հաշվարկների սահմանաչափի սահմանման վերաբերյալ» թիվ 210 որոշմամբ ապրանքների (այդ թվում՝ անշարժ գույքի առուվաճառքի դեպքում) և ծառայությունների դիմաց վճարումները 150.000 գրիվնյայից (մոտավոր 5.500\$) ավել չեն կարող իրականացվել կանխիկ եղանակով:

- Բուլղարիայի 2011թ. «Կանխիկ վճարումների սահմանափակման» ակտի համաձայն՝ Բուլղարիայի տարածքում վճարումները միայն բանկի միջոցով պետք է իրականացվեն, եթե դրանց արժեքը հավասար կամ գերազանցում է 15.000 բուլղարական լեվը (մոտավոր 8.300\$):

- Սլովակիայի 2012թ. «Կանխիկ վճարումների սահմանափակման մասին» թիվ 394/2012 ակտով արգելվում է ֆիզիկական անձանց միջև գործարքների, այդ թվում՝ անշարժ գույքի առուվաճառքի դեպքում 15.000 եվրոյից ավել, իսկ իրավաբանական անձանց միջև գործարքների դեպքում 5.000 եվրոյից ավել վճարումների կանխիկ իրականացումը:

- Պորտուգալիայի 2017թ. «Կանխիկ» որպես վճարումների միջոց, օգտագործման մասին» օրենքով արգելվում է ֆիզիկական անձանց միջև գործարքների, այդ թվում՝ անշարժ գույքի առուվաճառքի դեպքում, 3000€-ին հավասար կամ ավել կանխիկ եղանակով վճարումների իրականացումը:

- Ռումինիայի կառավարության 2015թ.-ի թիվ 15/1996 «Ֆինանսական և օտարերկրյա արժույթների կարգավորումը խստացնելու մասին» որոշմամբ արգելվում է 10.000 եվրոյից ավել կանխիկ եղանակով վճարումների իրականացումը:

- Սլովենիայի 2007թ. «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման մասին» ակտ»-ով արգելվում է 15.000 եվրոյից ավել կանխիկ եղանակով վճարումների իրականացումը:

3. Միջազգային պահանջներին համապատասխանեցնել ՋՈԶ տարածման հասկացությունը

ՀՀ քրեական օրենսգրքի 386-րդ հոդվածով նախատեսված ՋՈԶ տարածման հանցակազմում փոփոխությունների կատարումը պայմանավորված է ՄԱԿ ԱԽ 1540 բանաձևով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Համապատասխանեցման արդյունքում նախատեսվում է ընդլայնել ՋՈԶ տարածման հանցագործության առարկան՝ դրա մեջ ներառելով միջուկային զենքը, ՋՈԶ-ի փոխադրման հատուկ միջոցները, ինչպես նաև հանցագործության օբյեկտիվ կողմը՝ ներառելով մի շարք այլ այլընտրանքային արարքներ: Դրանք են հանցագործության առարկան մշակելը, տիրապետելը, փոխադրելը, ՋՈԶ-ի փոխադրման հատուկ միջոցներ օգտագործելը:

4. «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանել ՓԼ/ԱՖ վերաբերյալ առաջացած կասկածները չբացահայտելու անհրաժեշտությամբ պայմանավորված հաշվետվություն տրամադրող անձանց հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն (այսուհետ՝ ՀՊՈԲ) իրականացնելու պարտականությունից ազատելու վերաբերյալ դրույթներ

ՖԱԹՖ 10-րդ հանձնարարականի համաձայն՝ այն դեպքում, երբ ֆինանսական հաստատության մոտ կասկածներ են առաջանում ՓԼ/ԱՖ վերաբերյալ, և հաստատությունում ողջամտորեն կարծում են, որ ՀՊՈԲ գործընթացն իրականացնելը կհանգեցնի հաճախորդին իրենց կասկածների բացահայտմանը, հաստատությանը պետք է թույլատրվի չիրականացնել ՀՊՈԲ գործընթացը՝ փոխարենը պահանջելով ներկայացնել կասկածելի գործարքի մասին հաշվետվություն: ««Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվել է նման պայմանների առկայության դեպքում ՀՊՈԲ (բացառությամբ՝ նույնականացման և ինքնության ստուգման) չիրականացնելու հնարավորություն:

5. Լրացումներ, որոնք պայմանավորված են «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի կիրառման արդյունքում ի հայտ եկած թերությունները վերացնելու անհրաժեշտությամբ

««Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով

10-ից ավել աշխատակից ունեցող ոչ ֆինանսական հաստատությունների համար սահմանվում է ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ՓԼ/ԱՖ ռիսկերը բացահայտելու և գնահատելու պարտականություն: Նախագծով նախատեսվում է նաև լիազոր մարմնի իրավասությունների շրջանակը լրացնել հաշվետվություն տրամադրող անձանց հավելյալ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարականներ տալու իրավասությամբ, ինչպես նաև հստակեցումներ են կատարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներում, մասնավորապես՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հասկացության մեջ և այլն:

3. Ակնկալվող արդյունքը

ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության կատարելագործման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը համապատասխանեցնել առկա միջազգային պահանջներին: